ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՃՇԳՐՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ՑՈՒՑԱԿԻ ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննությունների նախապատրատական փուլի բաղկացուցիչներից է շրջանավարտների կողմից ըստ առարկաների քննության հաստատման, ճշգրտման, փոփոխման ցուցակի լրացումը: Շրջանավարտներին պետք է տեղեկացնել, որ դա վերջնական փաստաթուղթ է, որի հիման վրա էլ նա մասնակցելու է միասնական քննություններին, այսինքն՝ այդ ցուցակների ստորագրումից հետո դիմում-հայտում կատարված նշումները դառնում են անվավեր: Օրինակ, եթե շրջանավարտը դիմում-հայտում «Հայոց պատմությունը» նշած է եղել որպես միասնական քննություն, իսկ «շրջանավարտների՝ ըստ առարկաների հաստատման, ճշգրտման, փոփոխման» ցուցակում այն փոփոխել և ընդգրկվել է պետական ավարտական քննությունների մեջ, ապա նա «Հայոց պատմություն» առարկայից հանձնելու է պետական ավարտական քննություն: Բացի այդ, պետք է տեղեկացնել նաև, որ նրանում լրացված անձնական տվյալների հիման վրա են տրվելու միասնական քննություններին մասնակցելու անցաթղթերը, ինչպես նաև քննությունների արդյունքների վկայագրերն ու տեղեկանքները: Պետք է ուշադրությամբ հետևել շրջանավարտների կողմից «շրջանավարտների՝ ըստ առարկաների հաստատման, ճշգրտման, փոփոխման» ցուցակում կատարվող գրանցումներին՝ լրացվող անձնական տվյալների յուրաքանչյուր բառի, տառի, թվի՝ անձը հաստատող փաստաթղթերին համապատասխան լինելուն, ինչպես նաև, թե արդյո՞ք ճիշտ են մատնանշվել քննական առարկաները: Այն դեպքում, երբ շրջանավարտը չի կատարում որևէ փոփոխություն «շրջանավարտների՝ ըստ առարկաների հաստատման, ճշգրտման, փոփոխման» ցուցակում, ապա նա ցուցակի համապատասխան մասում գրում է «հաստատում եմ» և ստորագրում: Երբ շրջանավարտը անձնական տվյալներում նկատել է անճշտություններ (օրինակ, անվան, ազգանվան կամ հայրանվան սխալ, տառասխալ կամ անձնական տվյալների սխալ կամ թերի մուտքագրում), նա կարմիր գույնի գրիչով ուղղում է դրանք և ցուցակի համապատասխամ մասում գրում է «ճշգրտում», ապա ստորագրում է: Իսկ երբ շրջանավարտը կամենում է ընտրված քննական առարկաների մեջ փոփոխություն կատարել, նա կարմիր գույնի գրիչով ջնջում է այն առարկան, որից այլևս չի ցանկանում հանձնել միասնական քննություն և կատարում է համապատասխան նշում այն առարկայի վանդակում, որից ցանկանում է հանձնել քննություն, այնուհետև գրում է «փոփոխություն» և ստորագրում է: Հնարավոր են դեպքեր, երբ միևնույն շրջանավարտի կողմից ցուցակում կատարվի և՛ «ճշգրտում», և՛ «փոփոխություն»: Այդ դեպքում պետք է ցուցակի համապատասխան մասում գրվի «ճշգրտում-փոփոխություն» և դարձյալ ստորագրվի:

Այն դեպքում, երբ շրջանավարտը բոլոր քննությունները նշել է որպես պետական ավարտական քննություն և ցանկանում է փոխարինել միասնականով (մեկ կամ մի քանի առարկա), ապա նա լրացնում է միասնական քննության դիմում-հայտ:

ՃՇԳՐՏՎԱԾ և ՓՈՓՈԽՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ՉԵՆ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԳԹԿ: